ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մրգավան համայնք, /0235/ 2-25-29, mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<21>> դեկտեմբերի 2012 թվականի N 19

ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով՝ Մրգավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մրգավան համայնքի 2013թ. տեղական տուրքերի և վճաների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ---- 20.000 դրամ:

2) սույն կետի <<1)>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----- 30.000դրամ

բ. 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ----50.000դրամ

գ. 1001-ից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ----------70.000դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------3000դրամ

4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------5000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն----------3000դրամ

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար----------3000դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար----------3000դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար----------350 դրամ:

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է----------150.000դրամ:

3) Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տարեկան տուրքը սահմանվում է ----------30.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար ----------25.000դրամ

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար----------50.000դրամ

3) բաղնիքների/ սաունաների/ համար----------200.000դրամ

4) խաղատների կազմակերպման համար----------500.000դրամ

5) շահումով խաղերի կազմակերպման համար ----------250.000դրամ

6) վիճակախաղերի կազմակերպման համար----------100.000դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ –ի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝----------1000դրամ

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝----------2500դրամ

3) այլ արտաքին գովազդի համար----------500դրամ

4)դատարկ գովազդային վահանակների համար----------700 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է ----------500դրամ

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է----------5000դրամ

10. ՏԻՄ տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու, վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար----------2000 դրամ

11. ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար----------2000դրամ

12. ՏԻՄ կողմից աղբահանություն իրականացնելու համար նախատեսվում է տեղական վճար՝ յուրաքանչյուր անձի համար տարեկան վճար---------- 600 դրամ:

Սույն որոշման առաջին, երկրորդ և երրորդ կետով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը:

Ավագանու անդամներ՝ կողմ(5) դեմ(0) ձեռնպահ(0)

Ա. Վլասյան

Գ. Ալեքսանյան

Կ. Գալստյան

Մ. Թևոսյան

Մ. Խուդավերդյան

Համայնքի ղեկավար՝ Ա. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մրգավան համայնք, /0235/ 2-25-29, mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<21>> դեկտեմբերի 2012 թվականի N 20

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, <<ՄՐԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 -րդ հոդվածի 26- րդ կետի պահանջներով՝ Մրգավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մրգավան համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների, <<Մրգավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ աշխատակիցների հետևյալ թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը.

1.Համայնքի ղեկավար՝----------150.110դրամ

Հայեցողական պաշտոն

2.Համայնքի ղեկավարի տեղակալ՝1---------- 99.207դրամ

Համայնքային ծառայության պաշտոններ

3.Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ 1----------112.434դրամ

4.Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ 1-------99.207դրամ

5.Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ 1-------99.207դրամ

6.Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ 1---95.240դրամ

7.Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ՝ 1--56.879դրամ

Պայմանագրային աշխատողներ

8.Գրադարանավար ՝ 1 ----------62.170 դրամ

9.Գործավար՝ 1----------56.879 դրամ

10.Հարկահավաք՝1 ----------99.207 դրամ

Տեխսպասարկման անձնակազմ

11.Պահակ՝ 1---------- 46.297 դրամ

12.Վարորդ՝ 1---------- 75.397 դրամ

13. Հավաքարար՝ 1 ---------- 56.879 դրամ

<<Մրգավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ

1.Մանկապարտեզի տնօրեն՝----------91.000 դրամ

2.Մանկապարտեզի դաստիարակ՝1 ----------46.300 դրամ

3.Մանկապարտեզի դաստիարակ՝1 ----------46.300 դրամ

4.Մանկապարտեզի դաստիարակ՝1 ----------46.300 դրամ

5.Մանկապարտեզի դաստիարակ՝1 ----------46.300 դրամ

6.Մանկապարտեզի դաստիարակի օգնական 1----------48.200դրամ

7.Մանկապարտեզի դաստիարակի օգնական՝1----------48.200դրամ

8.Մանկապարտեզի խոհարար՝1----------46.300դրամ

9.Երաժշտական դաստիարակ՝ 1----------48.200դրամ

10.Բուժքույր՝1----------46.300դրամ

11.Մանկապարտեզի հաշվապահ՝ 1----------50.500դրամ

12.Հավաքարար՝ 1----------46.300դրամ

13.Պահակ ՝1----------46.300դրամ

Ավագանու անդամներ՝ կողմ(5) դեմ(0) ձեռնպահ(0)

Ա. Վլասյան

Գ. Ալեքսանյան

Կ. Գալստյան

Մ. Թևոսյան

Մ. Խուդավերդյան

Համայնքի ղեկավար՝ Ա. Հարությունյան